ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Արտիմետի
գյուղապետարան

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирский марз
община с. Артимет

057 կոդ 04704111

Հասցե Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4 - 76 - 01

N 98

_05 դեկտեմբերի 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Հայտնում ենք Ձեզ, որ Արմավիրի մարզի Արտիմետ համայնքում 2011 թվականի նոյեմբեր ամսին ընդունվել է համայնքի ղեկավարի երկու որոշում և արձակվել է վեց կարգադրություն :

Առդիր 10 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

11685-11
07 12 2011

Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
Արտիմետ համայնքի ղեկավարի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----11-------

«----02----» նոյեմբերի 2011 թ.

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

ԿԱՐԵՆ ՎԱՐԴԳԵՍԻ ԵՂՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության Վաղարշապատի անձնագրային բաժանմունքի արձանագրությունը.

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. Քաղաքացի Կարեն Վարդգեսի Եղյանին ենթարկել վարչական պատասխանատվության 50 000 դրամ գումարով, Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 195^2 հոդվածը խախտելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Զ. Միրզախանյան

Հ Հ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
Արտիմետ համայնքի ղեկավարի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -----12-------

Հասցե. Արմավիրի մարզ
գյուղ Արտիմետ
Հեռ. 4-76-01

«----28----» նոյեմբերի 2011 թ.

ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀԱՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի , Արտիմետ գյուղի բնակիչ Սարգիս Հայրապետյանը դիմել է, Արմավիրի մարզ, գ. Արտիմետ, Թումանյան փողոց թիվ 9 հասցեում գտնվող բնակավայրի, տնամերձ 1272.0քմ հողամասի և հողամասում առկա շենք – շինությունների նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001 թ. , հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1 , 2 , 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 15.05.2006 թ. թիվ 912 – Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1- ին ենթակետերով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Արմավիրի մարզ, գ. Արտիմետ , Թումանյան փողոց թիվ 9 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Սարգիս Հայրապետյանի

գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1272.0քմ հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք – շինությունների նկատմամբ:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենք – շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Սարգիս Հայրապետյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-րն կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ , տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Զ. Միրզախանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

N -----6------

«-----01---» նոյեմբերի 2011 թ.

ՀՈՒՓՍԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158 և 159 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» նո. 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հ. Հակոբյանի 01.11.2011թվականի դիմումը

Կարգադրում եմ՝

1. 2011 թվականի նոյեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի գրադարանավար Հռիփսիկ Հարությունի Հակոբյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 24 / 20 նվազագույն և 4 լրացուցիչ/ օր տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել 2011 թվականի դեկտեմբերի 3-ից:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Զ. Միրզախանյան

2011 թվական

նոյեմբերի 1

գ. Արտիմետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

N -----7-------

«-----03---» նոյեմբերի 2011 թ.

ՄԱՆՎԵԼ ԼՅՈՒԴՎԻԳԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158 և 159 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» նո. 1384-Ն որոշմամբ

Կարգադրում եմ՝

1. 2011 թվականի նոյեմբերի 4-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Մանվել Լյուդվիգի Սահակյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 24 / 20 նվազագույն 4 լրացուցիչ / օր տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել 2011 թվականի դեկտեմբերի 8-ից:
3. Համայնքի ղեկավարի լիազորությունները ժամանակավորապես վերապահել համայնքի աշխատակազմի ղեկավար Գ. Մովսիսյանին:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Զ. Միրզախանյան

2011 թվական
նոյեմբերի 3
գ. Արտիմետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N ------8------

«----10----» նոյեմբերի 2011 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Արտիմետի գյուղական համայնքի գյուղապետարանում և համայնքի ենթակայության կազմակերպություններում գույքագրում կատարելու նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին N 8 կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել 5 օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մովսիսյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Զ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

2011 թվական
նոյեմբերի 10
գ. Արտիմետ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արտիմետի
գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի
նոյեմբերի 10-ի N 8 կարգադրության

ԿԱԶՄ
ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ

Հանձնաժողովի նախագահ

1. Մանվել Սահակյան - համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

2. Անահիտ Հովհաննիսյան - աշխատակազմի առաջատար մասնագետ

3..Գուրգեն Բաբայան - ավագանու անդամ

4. Ջանես Նազարյան - ավագանու անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

N -----9-------

«-----29---» նոյեմբերի 2011 Թ.

ԳԱՅԱՆԵ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158 և 159 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» նո. 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գ. Մովսիսյանի 29.11.2011թվականի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2011 թվականի դեկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի աշխատակազմի քարտուղար Գայանե Մարտիրոսի Մովսիսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 20 նվազագույն աշխատանքային և 4 լրացուցիչ օր տևողությամբ:
2. Աշխատանքի մեջ համարել 2011 թվականի հունվարի 10-ից:
3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները ժամանակավորապես վերապահել համայնքի աշխատակազմի առաջատար մասնագետ Անահիտ Հովհաննիսյանին:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Զ. Միրզախանյան

2011 թվական
նոյեմբերի 29
գ. Արտիմետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N ------10------

«----30----» նեյեմբերի 2011 թ.

ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի « բ » ենթակետով, ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մովսիսյանի նկատմամբ կիրառել խրախուսում՝ միանվագ դրամական պարգևատրում՝ 92 000 / իննսուներկու հազար / դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Զ. Միրզախանյան

2011 թվական
նոյեմբերի 30
գ. Արտիմետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԻՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N ------11------

«----30----» նոյեմբերի 2011 թ.

ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մանվել Սահակյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգև՝ 110 000 / հարյուր տաս հազար / դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Զ. Միրզախանյան

2011 թվական
նոյեմբերի 30
գ. Արտիմետ